

Ա. Զինուոր - Կը հրամայէ՞ որ միւս զերիններուն խառնենք:

Կարէն - Ո՛չ. թող հոս աչքիս տակ մընայ: Երբ առիթ ըլլայ՝ արքայից արքային կը շրջեմ:

Բ. Զինուոր - Մարդկանն յանձնարարեց ամէն զգուշութիւն ընել՝ որ չփախչի. շատ յանդուգն տղայ է. մանաւանդ թէ իր հրամանն է՝ չլքայի տակ պահել:

Կարէն - Ես իմ ընելիքս գիտեմ. իր հրամաններուն պէտք չունիմ: Դուք կրնաք ձեր բանակը վերադառնալ: (Վահանիկին) Պարսկերէն գիտե՞ս:

Վահանիկ - Ո՛չ:

Կարէն - Ես հայերէն բաւական գիտեմ: Կրնանք զերար հասկնալ: Մի՛ վախեր, հոս ապահով ես:

Վահանիկ - Ես ոչ մէկէն չեմ վախեր. մահէն ալ վախ չունիմ:

Կարէն - Հապա ինչո՞ւ կը դողաս:

Վահան - Կատաղութենէս կը դողամ:

Կարէն - Հանդարտէ՛, հանդարտէ՛, տըղաս. ամբողջ կրակ ալ դառնաս՝ Պարսից անծայր կայսրութիւնը չես կրնար հըրդեհել:

Վահան - Բայց մենք մեր սրտերուն մէջ կրակ մ'ունինք՝ որ ամբողջ ձեր կայսրութիւնը չի կրնար մարել:

Կարէն - Կը տեսնեմ որ քաջ եւ խելացի պատանի մըն ես: Կարգալ գրել գիտե՞ս:

Վահան - Հայերէն՝ այո՛:

Կարէն - Պարսկերէն կը սորվի՞ք:

Վահան - Ըսի՛ թէ չեմ գիտեր:

Կարէն - Պէտք է մեր լեզուն ալ լաւ սորվիս, հացդ, ջուրդ մենք պիտի տանք:

Վահան - Ո՛չ մէկ հայ ձեր հացին ու ջուրին կարօտ է. դո՛ւք եկեր էք մեր հացն ու ջուրն ուտելու, խմելու:

Կարէն - (Ինքն իրեն) Եթէ բոլոր հայ տղաքը այսպէս կը մեծնան, այս երկիրը մեր կարծած երկիրը չէ: (Վահանիկին) Կարօտցա՞ր ծնողքիդ:

Վահան - Խնդրեմ հարցումներ մի՛ ընէք, ես սիրտ չունիմ ձեզի պատասխանելու:

Կարէն - Յոգնած եւ անօթի պիտի ըլլայ: (Պահալիկին) Պահա՛կ, գնա՛, այս տըղուն քիչ մը ուտելիք բեր: (Վահանիկին) Դուն իմ քովս կը մնաս, մինչեւ Յազկերտին զրկեմ: Կը ծառայես ինձ, ջուր բերելու, վրանին առջեւ մաքրելու: Խելացի եւ զեղեցիկ ես: Ես հայերը կը սիրեմ, մաքուր եւ կիրթ եմ:

Վահան - Ես ծառայ չեմ ծնած: Մամի-կոնեանները բանակներու հրամանատար-

ներ են, ոչ թէ ծառաներ: (Պահալը ուտելիք կը բերէ) Ե՛տ տար, ես անօթի չեմ:

Կարէն - Մանչո՛ւկ, դուն դժբախտ տըղայ մ'ես, ես կ'ուզեմ քեզի բարի հայր ըլլալ: Եթէ հպատակիս՝ լաւ, ապա թէ ոչ՝ ոսկորներդ կը ջախջախեմ:

Վահան - Եթէ քու դաւակը ըլլար իմ տեղս՝ ի՞նչպէս պիտի ուզէիր որ վարուէր:

Կարէն - Ծիշտ քեզի պէս եւ աւելի, որովհետեւ նա կայսրութեան մը զաւակ է, իսկ դուն՝ մեր ոտքերուն տակ ճգմուած գերի ազգի մը զաւակն ես:

Վահան - Ծնչուած ձեր բիրտ ոյժին առջեւ, բայց հոգիով ու մտքով ձեզմէ հազար անգամ վեր. եւ լաւ գիտցէ՛ք՝ որ հոգին է ազգերուն յաւիտենականութիւն տուողը, ոչ թէ սուրը:

Կարէն - (Ինքն իրեն) Տղուն ըսածը ճիշտ է, սուրը կը ժանդոտի, կայսրութիւնները կը կործանին, բայց հոգին ու միտքը յաւիտեան կը մնան: Ապրի՛ս, Վահան, պատասխանի՛ր հաւնեցայ: Վրանիս առջեւէն չհեռանաս, պահակները կը զարնեն, դըլուկդ դիր այդ կոճիկին վրայ եւ քնացիր, յոյժած ես. կամաց կամաց ճակատագրիդ կը համակերպիս: (Վահան գլուխը կռնդին դրած կը քնանայ) Խե՛ղճ տղայ, (առանձին) մատաղ հասակին մէջ ծնողքին գրկէն յափշտակուած, կրնա՞յ խօսելու սիրտ ունենալ: Վատ դաւաճանի մը դոհն է, անոր երեւակայական թաղին մէկ դոհարը: Ի՞նչ յանցանք ունի այս պատանին որ զինքը չլքայի զարնեմ, անգո՛ւթ Վասակ: Եթէ ցեղակիցիդ հանդէպ դուր չունեցար, քեզի ո՞վ կը վստահի Արեաց բախտը:

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Վառա, Սամուէլ, յետոյ Կարէն եւ Վահան

Դուքսէն - (Բեմ կ'առաջնորդուին երկու հոգի, մին գիւղացիի գգեստ հագնուած (Սամուէլ), միւրը քաղաքացիի (Վառա): Գիւղացիին ձեռքը նուագարան մը ունի: Երկուքին աչքերն ալ կապուած են): Պահա՛կներ, արթո՛ւն:

Բ. Պահալ - (Դուքսէն) Ո՞վ են, ի՞նչ կ'ուզեն:

Ա. Պահալ - Կ'ըսեն թէ պետական սուրհանդակ են, զօրավարը կ'ուզեն տեսնել:

Բ. Պահալ - Աչքերնին կապեցէք եւ խուզարկեցէք վրանին, զէնք չունենան, զաւագիրներ կրնան ըլլալ:

Ա. Պահալ - Ոչ մէկ զէնք ունին, բայց պարսկերէն գիտցող հայեր կրնան ըլլալ: Զօրավարին լուր տուր:

Վառա - Բացէ՛ք աչքերս, ես գնդապետ Վառա՛ն եմ:

Բ. Պահալ - Աչքերդ զօրավարին առջեւ միայն կը բացուին:

Կարէն - (Բեմ ելլելով) Այդպիսիները դաւազանի լեզուն լաւ կը հասկնան, բացառապէս մենք փաթթեմք են այդ լրտես-ները: Բացէ՛ք աչքերնին: (Պահալը կը բանայ): Ոհ, դո՛ւն ես Վառա: Մոգերուն նայ): Ոհ, դո՛ւն սպայի տարազդ չես հաճակ է, ինչո՞ւ սպայի տարազդ չես հաճած: Այդ քովիկդ ո՞վ է:

Վառա - Ի՞նչ կասկածոտ պահակներ ունիս. ժամ մը մեզ կեցուցին, քնեցին, չհանգիստի որ ըսի թէ զօրավարը կ'ուզեմ տեսնել: Թշնամիներէն աղատեցայ, հոս կեանքս վրայ պիտի տայի:

Կարէն - Շատ դոհ եմ որ խտապահանջ են: Հիմա զէնքով չենք կուրիր, այլ ուր կորսնցուցի դարանակալներու ձեռքով. մինչեւ իսկ հայ կիները մեզի դէմ կը կուրին: Ի՞նչ պատճառով հոս եկար:

Վառա - Երեք ամիս է վտանգներու մէջ կը թափառիմ, այսպէս ծառայելու դըրեալստարար այս բարի գիւղացիին ծառայ, որ նուագելով իմ եւ իրեն հացը ծառայ: Երբ ըսի թէ Վասակը կը ճանչնամ՝ աչքերն ուրախութեամբ փայլեցան: Վասակը գիւղերէն է եւ խնթի պէս իր տէրը կը սիրէ, շատ բարիք գտեր է:

Կարէն - Հա՛յ է այդ գիւղացիին:

Վառա - Այո, Սիւնեցի հայ է:

Կարէն - (Գլուխը շարժելով) Ը՛մ... շատ դուր չի դար:

Վառա - Երբեք մի՛ կասկածի՛ր, տէր դըրավար, մեզմէ աւելի պարսկամոլ է, երբեք ամիս շատ հաւատարիմ ընկեր եղաւ: Եթէ ինքը չըլլար, անկարելի էր որ ես հոս հասնէի:

Կարէն - Պարսկերէն գիտե՞ս:

Վառա - Բաւական լաւ կը խօսի:

Կարէն - Քանի որ լաւ նուագել կ'ենք թող մեր քովը մնայ: Զանձարանայի կ'ուրա-մ'ունինք. գէթ նուագով քիչ մը կ'ուրա-թանանք: Ես հայ երգեցի, անուրդ ի՞նչ է: (Սամուէլին) Գիւղացի, տէր իմ:

Սամուէլ - Մոգոմոն է, տէր իմ:

Կարէն - Դուն քրիստոնեայ ես:

Սամուէլ - Տէր իմ, մենք լեռնցիներս ոչ մէկ կրօնքի վրայ որոշ զապափար ունինք:

Զեր հաւատքի մասին քիչ մ'աւելի բան գիտեմ:

Կարէն - Հող չէ, կը սորվիս: Մենք չենք մոռնար այս պատուական սպային ըրած ծառայութիւններդ: Պիտի ունենաս հա-րատութիւն, պատիւ եւ զեղեցիկ կիներ:

Վառա - Արդէն Վասակ իրեն խոստացեր է ճորտութենէ ազատել եւ սեփական հո-ղեր տալ:

Կարէն - Երբ Վասակ հոս գայ՝ ես ալ կը յիշեցնեմ իր խոստումը:

Վառա - Իրաւ որ արժանի է ամէն վար-ճատրութեան:

Կարէն - Մոգոմոն, այդ քնացած տղե-կը կը տեսնե՞ս, հայ է, գնա՛ հետք քիչ մը ընկերութիւն ըրէ:

Վառա - Որո՞ւ տղան է, հոս ի՞նչ դործ ունի:

Կարէն - Թանկագին դանձ մը: Հմայ-եակ Մամիկոնեանի անդրանիկ զաւակն է, Վահանիկը: Վասակ յափշտակելու ու մեզի գրկել է՝ Յազկերտին ճամբելու:

Վառա - Իսկապէս դանձ մը. ասոր պատ-ճառով թերեւս կարենանք Վարդանը խո-նարհեցնել:

Կարէն - Ուրեմն, գնդապետ, դուն մո-գերուն հետ Հայաստան չգացի՞ր:

Վառա - Գացի եւ սոսկալի բաներ ալ տեսայ:

Կարէն - Սոսկալի բանե՞ր:

Վառա - Մենք կը կարծէինք թէ հայ նախարարներուն ուրացութեամբ Հայաս-տան մերն է: Մոգերը իրարու մէջ բաժ-նած էին ազնուական տունները. աչք դրած էին անոնց ինչքերուն վրայ, բայց Անդր-գիւղին մէջ ախպիսի ժողովրդական յար-ձակումի ենթարկուեցանք, որ հազիւ քի-չեր կաշինին ապատեցին: Ահա մոգպետին ձեզի դրած նամակը. կարդացէ՛ք:

Կարէն - Վա՛յ ստրուկներ. արքայից արքային դէմ ելլել եւ սրբազան կրակը ջուրը նետել: Տուր սա նամակը:

Վառա - (Կուրծքը բանալով) Ահաա-սիկ նամակը:

Կարէն - Ի՞նչ տարօրինակ բան: Ինչո՞ւ կուրծքիդ վրայ գրեր ես:

Վառա - Դուք հոս անտաններու մէջ պաշտպանուած Մատեան գոհեղով՝ լուր պաշտպանութեան Հայաստան պատերազ-չունիք թէ ամբողջ Հայաստան պատերազ-չունիք: Խուժանք Անդր գիւղէն մի գաւառ եղած է: Խուժանք Պարսիկ կը փնտռէ՝ խանդավառուած, զամար: Եթէ Մոգոմոնը չըլ-սպաննելու համար:

Կարէն - Լաւ ըսիր: (Սամուէլին) Գնա

պահանջներն ըստ՝ որ վրամիս կերակուր բե-
րեն, դուռն ալ հոն բան մը կեր:

Վրամ - (Կարծիք բանալով) Կարդացէ՛ք
խնդրեմ:

Կարէն - (Վրամին դիմացը կեցած կը
կարդայ) Կարէն զօրավար, մենք չարա-
չար խաբուրներ ենք Վասակէն: Անդդ դիւ-
ղի մէջ մոզերը ջարդուեցան, սրբազան
կրակը ջուր նետեցին: Մենք կը վերա-
դառնանք Պարսկաստան, եթէ ո եւ է օգ-
նութիւն չհասնի:

Շատ լաւ եղած է. ապրիլ, Հայեր. այս-
պէս Միհրանբեկ եւ Մովսէսեան մովսե-
սը կը հասկնան՝ թէ ինչպէս Վասակ իր
մատին վրայ կը խաղցնէ ամբողջ պարսիկ
աղբը եւ Հայաստանը: Միհրանբեկ կը
հրաժարի իր անմիտ քաղաքականութենէն
եւ Մովսէսեան իր մոլի ծրագիրներէն: Քա-
նի անգամ արքայական ատենանին առջեւ ը-
սի՝ թէ այդ մարդուն վրայ մի վստահիք:
Հայրենիքի դաւաճանը օտարին անկեղծ
բարեկամ չի կրնար ըլլալ:

Վրամ - Եւ սակայն պէտք ենք տակաւին
հաւատք ընծայել Վասակին. թող ըլլայ
կեղծ, բայց անհրաժեշտ է դադարեցնել
քաղելու եւ Հայաստանի մէջ ցրուած
պարսիկներուն կեանքը փրկելու համար:

Կարէն - Միհրանբեկ լուր ունի՞:

Վրամ - Գաղտնի սուրհանդակ մը մեկ-
նեցաւ, բայց չեմ գիտեր թէ ողջ հասա՞ւ:

Կարէն - Այդքան վտանգաւոր են ճամ-
բաները:

Վրամ - Այս երկրին մէջ հրդեհ մը ին-
կած է. մէկ կողմը մարես՝ միւս կողմը
կը բռնկի:

Կարէն - Ես ո եւ է մէկուն օգնութեան
չեմ կրնար հասնիլ: Վասակէն լսեցի՝ թէ
Վարդան արդէն Կովկաս մեկնել է, Սե-
բուստին ոյժերը խորտակելու: Հարկ է
Սեբուստին թիկունքը պաշտպանել եւ ա-
պահովել պարենատար կարաւաններու եր-
թեւեկը:

Վրամ - Ո՛հ, Դենչապուհէն հրահանգ
ունիմ քու զօրաբաժինիդ մէջ ծառայելու:

Կարէն - Շատ ուրախ եմ քաջարի սպայ
մը ունենալուս համար:

Վրամ - Շնորհակալ եմ, զիս կը չլա-
ցնէք:

Կարէն - Վրանդ պատրաստ եմ. դեռ
բան մը կեր եւ հանգչէ:

Վրամ - Այնքան անօթի չեմ, բայց սա-
տիկ քուն ունիմ (կը մեկնի):

Կարէն - Լաւ մը հանգչէ, հոս մեր
կեանքը միշտ ալեկոծ է: (Մօտենալով
Վահանին) Այս լակոտը դեռ կը քնանայ:

(Ոտով հրելով) Է՛յ, արթնցի՛ր. դեռ,
Վրամին ջուր բեր, վրանիս առջեւն ալ
լաւ մը ալէ, աղբանոց դարձեր է:

Վահան - (Յօրանջելով եւ ձկտելով)
Ա՛հ...

Կարէն - Ոտքի ելիր եւ աշխատէ: Դը-
ղեակներու փափուկ օրերը անցան: (Պա-
հալը կանչելով) Պահա՛կ, առ խաբաղա-
նը եւ քչէ սա լակոտը՝ որ ջուր բերէ:

Պահակ - (Խաբաղանք փաշելով) Քալէ՛,
անարդ հայ:

Վահան - Ինչո՞ւ կը դարնես, սինլոր:

Կարէն - Աւելի ուժով խաբաղանէ՛՝ երբ
բերանը կը բանայ: Հոս հրամաններն ա-
ռանց խօսքի կը կատարուին:

Վահան - (Ջրամանը ձեռքի առնելով)
Ա՛խ, ե՞րբ պիտի դայ այդ օրը:

Կարէն - Նորէ՞ն կը խօսիս: Ի՞նչ ըսիր:

Վահան - Ըսի թէ՛ ե՞րբ պիտի դայ այդ
երջանիկ օրը:

Կարէն - Երբ դուող Վարդանը Որմիդ-
դին առջեւ խոնարհի:

Վահան - Երթանք Վահան, երթանք,
այդ օրը գալիք չունի (Համակերպ շեշ-
տով):

Կարէն - Ի՞նչ զարմանալի հոգի ունին
սա Հայերը, որքան տանջես՝ այնքան կը
պնդանան: Բայց մենք պիտի քակենք ձեր
սրտին ամբողջները: Դուռն ալ, Մամիկո-
նեանի ձաղ, դուռն ալ պիտի խոնարհիս
մեր սուրին եւ արեգակին առջեւ:

Վահան - (Ջրամանը ծանրօրէն գետին
կը դնէ եւ երկար) Ա՛հ... (Աղօթքի փոքր
կը հնչէ):

Կարէն - Աղօթքի փոքր հնչեց. երթանք,
ամենակալ արեգակը սարերու վերեւէն կը
բարձրանայ:

Վահան - Ատիկա մեր արեւն է, ձերը
չէ՛:

Կարէն - Աշխարհի վրայ մէկ արեւ կայ,
ան ալ պարսկական արեգակն է:

Դուրսէն (Խորհրդաւոր եղանակով)

Օրհնեալ արեգակ,
Դու լոյս աշխարհի,
Բարութիւն եւ կեանք,
Օրհնեալ արեգակ: (Կրկնել)

Խաղաղութիւն եւ սէր,
Միշտ բարի աստուած,
Սրբոյժ ճաճանչներ,
Ու սուրբ դէմքդ բաց: (Կրկնել)

Վահան - (Ինքն իրեն) Ի՞նչ յիմար մար-
դիկ եմ:

Կարէն - Ի՞նչ ըսիր. հայհոյեցիր դու
մեզի:

Վահան - Ի՞նչ յարմար օր է երգելու:
Կարէն - Հիմա դուռն ալ ամենագոր ա-
րեգակին երկրպագութիւն ըրէ՛, յետոյ կը
դուարձանանք: Մեզ պարսիկներս այնքան
զար եւ տխուր մարդիկ մի՛ կարծէք: Մենք
ալ երգ ու պար կը սիրենք: Մենք հաճոյ-
քի եւ ուրախութեան համար կ'ապրինք:

Վահան - Ես ոչ ձեր կրօնքը կը ճանչ-
նամ, ոչ ալ աղօթքի ձեւերը գիտեմ:
Կարէն - Իրաւունք ունիս. աւելորդ է
անձանոթ աստուած մը պաշտել: Հոգ չէ՛.
յետոյ քեզի կը սորվեցնենք: (Պահակին)

Կանչէ՛՛ այդ նորեկ գիւղացին, թող իր նը-
ւագարանով հոս դայ:

Վահան - Դուք երգել ու պարել գի-
տէ՞ք:

Կարէն - Ես երբ խմելու ըլլամ, սանկ
քիչ մը կ'օրօրամ:

Վահան - Ո՛հ, ձեր աղբին համար կ'ը-
սեմ:

Կարէն - Ո՛հ, մեր կիները պալատնե-
րու մէջ փակուած միայն կը գիւրնան: Հայ
աղջիկները աւելի սիրուն եւ ճկուն են. ես
անոնց պարն ու երգը շատ կը սիրեմ: Վա-
սակի դղեակին մէջ շատ տեսեր եմ:

ՏԵՍԻՆ ԶՈՐՐՈՐԴ

Սամուէլ - Վահան - Կարէն, յետոյ Վրամ
պար չունին՝ Հարաման գետին որդիներն
են:

Վահան - Այն աղբերը որ լաւ երգ ու
պար չունին՝ Հարաման գետին որդիներն
են:

Կարէն - (Սամուէլին) Սողոմոն, նստէ
սա կոճղին վրայ եւ հայկական աղբուր
սա կոճղին վրայ եւ հայկական ունի՛ս:

Սամուէլ - Բաւական լաւ է, տէր իմ:
Կարէն - Նուագէ եւ երգէ, ուրեմն. թող
Վահանն ալ պարէ:

Սամուէլ - Հայ սարերու աղջկան երգն
երգենք, այնպէս չէ՞ Վահան:

Ես եկած եմ հեռու սարէն
Քեզ տանելու հայ աղջիկ.
Դուռն թեւ առիւր մեր աշխարհէն,
Հեռու, հեռու զընացիր.
Մայրը չիմա պատշգամին
Քեզ կը սպասէ լալաղին:
(Վահան կը պարէ հետեւելով երգին)
Ելիւր, սօլերը հագիր,
Կապէ գօտիդ ոսկիէ,
Ձին դուրսն արդէն պատրաստ է,
Մեր աշխարհին զարդն եղիր:
Հայաստանի մէջն չիմա
Բուրեան վարդեր կը բացուին,

Սիրուն, ըսէք, թող դուրս դայ,
Հարս ըլլայ մեր աշխարհին:

Կարէն - (Մտի գարնելով) Ապրիլ, հրա-
շալի է:

Վրամ - Երգի ձայն լսեցի եւ վաղեցի:
Սողոմոն դեռ շատ երգեր գիտէ. լաւ է՞՞՞-
լար որ զինքն արքայից արքային տանինք.
վստահ եմ թէ շատ հաճոյք պիտի պատ-
ճառենք:

Կարէն - Երբ բուսական հայ աղջիկներ
ալ գերի առնենք՝ միասին կը տանինք:
Քիչ ատենէն Հայաստանի ամէն ինչը մե-
րը պիտի ըլլայ:

Վրամ - Ես շատ համոզուած չեմ: Մենք
փուշերու մէջ ինկած ենք:

Կարէն - Եթէ փուշ է՝ կրակով կ'ա-
րենք. եթէ երկաթ է՝ կը ծռենք, եթէ
վարդ է՝ կը համբուրենք եւ ծոցերնիս կը
դնենք:

Վրամ - Ես շատ յոռետես եմ. շատ բան
տեսայ. Որմիդդն ալ չի կրնար այդ կառ-
ղածները զսպել:

Կարէն - Մենք ալ շարունակ տխուր բա-
ներու վրայ կը խօսինք: Չկրցանք օր մը
ուրախ անցընել:

Վրամ - Լեզուն ցաւած ակոսային կ'եր-
թայ:

Կարէն - Ամէն օր կողոպուտի, սպան-
նուած զինուորի, կամ ջարդուած կարա-
ւանի լուրեր կը հասնին: Չես գիտեր ո՞վ
են, ուսկի՞ց կու գան, ո՞ւր կը թաղչին:

Վրամ - Չէ՞ք գիտեր՝ թէ ո՞ւր է ա-
տոնց որջը:

Կարէն - Ոմանք Երեւանի բերդը կ'ըսեն,
ուրիշներ Արմաւիրին անունը կու տան.
եւ մեր զինուորները սարսափով կը խօ-
սին Արմենակի կոչուած մէկու մը մասին:
Ո՞վ է այդ Արմենակը, ի՞նչ սատանայ է,
ոչ ոք գիտէ: Երանի թէ Վասակը դար եւ
եւք մը խորհէինք:

ՏԵՍԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Երկու հայ գիւղացիներ եւ վերինները

Կարէն - (Զինուորներուն) Ամօթ ձեզի,
Մատեան դուռի զինուորներ էք. ձեզի
գէ՞նք կը պակսի. քաջութիւն կը պակսի.
Գարնէիք, ջարդէիք եւ յափշտակէիք:
Պահակ - Մեզմէ ոմանք փորձեցին, սա-
կայն...

Կարէն - Սակայն ի՞նչ...:

Պահակ - Սակայն, միտքի պէս յարձա-

կեցան բահերով եւ սուրերով, ու կտոր կտոր քրին:

Կարէն - (Գիւղացիներուն) ճի՞շտ է. խօսեցէք, ստորակներ, ճի՞շտ է: Դուք ո՞վ էք, անարդ ճճիներ, որ արքայից արքային զինուորներուն կը դպչեք (Կը խաբարազանէ): Սողոմոն, դուն ասոնց լեզուն լաւ կը հասկնաս: Ձախճախէ ոսկորներն, մեռցուր որ հասկնան մեր ոյժը:

Սամուէլ - Անմիտ գիւղացիներ, որո՞ւ վրայ յոյս դրեր էք: Ապստամբ վարդապետն թէ խարխլած Ղեւոնդին վրայ: Վասակն է Հայաստանի տէրը, եւ Վասակ չլու ծառայ է Յազկերտին: Ամէն մէկ պարսիկ զինուոր ձեր թաղաւորն է (Խաբարազանով կը զարնէ):

Գիւղացիներ - Թողութի՛ւն, ներեցէ՛ք, ամէն բան կու տանք:

Կարէն - Զարկ անխնայ, թող մեր ոյժը հասկնան:

Վահան - (Սամուէլի եւ գիւղացիներուն մէջ մտնելով) Դուն դուք չունի՞ս, ուրացող: Մեղք որ հայ անունը կը կրես:

Կարէն - (Ոտքի տակ առնելով Վահանը) Ես քեզի կը հասկցնեմ ինչ ըսել է հայութիւն: Ես որդի: (Վահան ոչ մէկ ճիչ կը հանէ):

Վաւա - Տղայ է, տէր զօրավար: Մանուկի սիրտ ունի: (Ինքն իրեն) Ի՞նչ արեւմտերի է, լաց միակ չունեցաւ:

Կարէն - Էջ կամ գիւղացի՛, նոյն բանն է. ասոնք միայն խաբարանով կը հասկընան:

Սամուէլ - Եստ իրաւունք ունիք. լըրբացեր են, զինուորներ են Անգլ զիւղի անունով:

Կարէն - (Սամուէլին) Սողոմոն, առհետ 200 տիգաւոր, եւ դնա թալանէ բոլոր շրջակայ գիւղերը: Եթէ զիմադրեն, սպաննէ, ջարդէ, գերի առ. այս է իմ հրամանս:

Վաւա - Սողոմոնին յանձնեցէք եւ դո՛ս պիտի մնաք:

Սամուէլ - Հաւերն իսկ ողջ չեմ ձգեր՝ եթէ յանդգնին մեր մազին ալ դպչել: (Գիւղացիներուն) Քալեցէ՛ք, անասուններ (Կը մեկնին բեմէն դուրս):

Կարէն - (Վահանին) Իսկ դուն, անհաւատ տղայ, կը սորվիս մեր կրօնը, արեւը պաշտել եւ իր գեղանի աղջիկը՝ կըրակը: (Պահակին) Պահակ, տար այս տղան մոգպետին որ սորվեցնէ մեր սուրբ կրօնը (Վահան կը մեկնի պահակին հետ):

Վաւա - Եթէ մենք յաջողինք Հայերը

մեր կրօնքին դարձնել, Վրաստան եւ ամբողջ Կովկասը միշտ մերը պիտի ըլլան, եւ Յունաստան պիտի դողայ մեր առջեւ:

Կարէն - Այդպէս պէտք է ըլլայ, Վաւա. Յազկերտ իրաւունք ունի. մէկ կրօնք, մէկ աղբուրիւն:

ՏԵՍԻԼ ՎԵՅԵՐՈՐԴ

Կարէն, Վաւա եւ Վահան

Պահակ - (Բեմ գալով) Տէր իմ, մոգպետն յուսահատեցաւ, յամառ տղայ է, եւ ամէն բանի հակառակ պատասխան կու տայ:

Կարէն - Զպատմե՛ց արեւակին զօրութիւնը, Որմիւղին հրաշքները:

Պահակ - Ես ալ քովն էի, ամէն բան պատմեց, բայց որո՞ւն կը խօսիս. հայհոյեց, ծաղրեց մեր աստուածները. եւ կորսուէ՛, ցնդած ծեր, ըսաւ սուրբ մոգպետին, եւ քարի պէս լռեց:

Կարէն - Ուր խօսքը չի հասնիր՝ սուրբ կը հասնի: (Վահանին) Հայու զաւակ, աչքերուս մէջ լաւ նայէ՛ (սպառնազին). քեզի մէկ խօսք ունի՞մ ըսելիք. կամ մեր կրօնքը՝ կամ Յազկերտին՝ կ'երթաս. եւ դուն լաւ դիտելի, թաղաւորին երթալ այդ յամառ կամքով՝ ողջ ողջ մօրթաղերծ ըլլալ ըսել է:

Վահան - Կարէն՝ զօրավար, լաւ դիտելի որ հայ քրիստոնեան մահէն չի վախնար, մանաւանդ Մամիկոնեան մը. պատրաստ եմ իմ կրօնքին եւ հայրենիքին համար ամէնէն դառն չարչարանքն իսկ կրելու:

Կարէն - (Ինքն իրեն) Ամէն հայու բերանը նոյն խօսքն է, աս ի՞նչ ոյժ է, ի՞նչ դաշտնիք է՝ որ պողպատ կը դարձնէ իրենց կամքը:

Վաւա - Տէր զօրավար, ձեռքդ այս հարցը, մեղի ամօթ է տղու մը հետ վէճի բռնուիլ: Անիկա չի հասկնար մեր կրօնքին վեհութիւնն ու ճշմարտութիւնը: Եթէ կ'ուզէ՛ք՝ Սողոմոնին յանձնեք, անոր լեզուն լաւ կը հասկնայ:

Կարէն - Թող այդպէս ըլլայ, Սողոմոնին յանձնեք: Բայց սա մեր զրկած 200 տիգաւորները դեռ չդարձան:

Վաւա - Պէտք է դարձած ըլլան: (Գիւղի դուրս) Պահակ, Սողոմոնն եկա՞ւ:

Պահակ - (Բեմի անկիւնէն) Այո՛, արդէն հասան:

Վաւա - Սողոմոնը մեղի կանչէ:

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Սամուէլ եւ վերինները

Սամուէլ - (Բեմ ելլելով) Տէր իմ, ինչ որ հրամայեցի՛ք՝ եղաւ: Բաւական գլուխներ ջարդեցինք. թող հասկնան արքայից արքային ոյժը: Մեր բերածը կրնայ քանի մը զօրարածիներ կերակրել:

Վաւա - Զբոսի՛ թէ Սողոմոնը միայն կրնայ ասոնց խօսք հասկցնել:

Կարէն - Եթէ այդ պնդադրուի Մամիկոնեանն ալ կարգի բերես, քեզ լաւ կը վարձատրենք. քանի մը պարսիկ կիներ կու տանք, դրամ եւ հարստութիւն, դուն կրօնքով արդէն մերն ես:

Սամուէլ - Եստ բարի էք, տէր իմ, ինչ ծիւղեցէք, ես անոր լեզունն ալ, կրօնքն ալ լաւ գիտեմ: (Սամուէլ եւ Վահան կը մեկնին):

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Կարէն, Վաւա եւ վերաւոր մը

Վերաւորը - (Դուրսէն պոռալով) Օղնութիւն, կը մեռնի՛մ, զօրավարը կ'ուզեմ:

Կարէն - Վաւա, դնա՛, նայէ՛ ո՞վ է, ի՞նչ ունի: (Վաւա դուրս կ'ելլի եւ խկոյնի մէջ կու գայ): Արդեօք ծանր փորձաքննեցաւ:

Վաւա - (Հետք բերելով վերաւորը) Մեր զինուորներէն մէկն է, զիւղացիները դուրսը ջարջախեր են:

Կարէն - Պատմէ՛, ի՞նչ եղաւ:

Վերաւոր - Սպաննեցին, ջարդեցին անիւծի պէս ընկերներս:

Վաւա - Հայ զիւղացիները:

Վերաւոր - Ո՛չ, Արմաւիր բերդին քով մեր կարաւանը կողոպտեցին եւ պահապանեցին:

Կարէն - Անէ՛ժք. դարձեալ նոյն պատմութիւնը:

Վաւա - Եստ ուր էին:

Վերաւոր - Ա՛հ. ձգէ՛ք մը չունչ առնեմ: Ես կը մեռնիմ... Թերեւս հաղարներ...:

Կարէն - Յետոյ ո՞ւր փախան: Բայց բերանդ, խօսէ՛...

Վերաւոր - Արմաւիր... Արմաւիր... (Վերաւորը անշուք գետին կ'իյնայ):

Վաւա - Արմաւիր... Վարդանի աջ բազուկը: Ես կը ճանչնամ զինքը. քաջ մարտիկ է:

Կարէն - Սա հողը մտնելիք Վասակն ալ չեկաւ որ խորհրդէք եւ քանդենք ասոնց

բոյնը: (Պահակին) Պահակ, քաշեցէք այս զիւղը եւ տարէք բարձր տեղ մը. թող անգղները զինքն ուտեն:

Վաւա - Ի՞նչ կը յուսաք դաւաճանէ մը. ես կը վախեմ որ երկու երեսով կը դործէ:

Շրջակայ զիւղացիները, լեռնցիները անիւծ յանդուգն դարձեր են. մի գուցէ վարդան Կովկասի մէջ յաջողութիւններ ունեցաւ եւ իրենք լուր առին:

Կարէն - Եթէ Վասակ դաւակից է այդ սպաննութիւններուն, ես զինքը կ'ախելու տամ. բայց պէտք է նախ բացատրուի թիւն ուղեւ: Որմիւղը վկայ, եթէ որոշ գիտնամ թէ մեղի հանգէպ ալ դաւաճան է, ես ինքս զինքը կը սպաննեմ:

Վաւա - Մե՛ղք, ո՛րքան սքանչելի զինուորներ կ'որսնցուցինք: Ես ապագան չատմութ կը տեսնեմ եւ այդ նենդաւորին վրայ վստահութիւն չունիմ: Հայերը մէկիկ մէկիկ մեղ պիտի ջարդեն:

Կարէն - Միհրնեսրէ՛ ինծի նամակ դրած էր՝ թէ Վասակ հողիով մարմնով մեր կողմն է, մեր կրօնքն ընդունած է՝ Հայաստանի թաղին փոխարէն:

Վաւա - Ո՞վ պիտի տայ իրեն այդ թաղը:

Կարէն - Ես ալ չեմ գիտեր: Պատմութիւնը չի յիշեր թէ դաւաճան մը վարձատրուած ըլլայ:

Վաւա - Ինծի համար՝ Վասակ ոչ քրիստոնեայ է, ոչ ալ արեւապաշտ. նա միայն մոլի փառասէր մէկ. ու դրամով եւ պատիւով միայն պիտի կարենանք զինքը մեղի կապել:

Կարէն - Ու մենք կը ջարդուինք եւ ինքը չի տեսնուիր: (Դուրսէն փողի ձայն)

Պարսկական փողի ձայն է. ի՞նչ փող է. Պարսկական փողի ձայն է. մեր վրայ յարձակում մի՞ գուցէ ուղղակի մեր վրայ յարձակում մի՞ ըլլայ: (Վաւաին հետ բեմին եզրէք ըլլալով) Պահակներ, արթուն, հսկեցէ՛ք:

Վաւա - Հորիզոնին վրայ մութ կէտեր սկսան տեսնուիլ: Թշնամի՛ն... Թշնամի՛ն...:

Կարէն - Ի զէ՛ն, ի զէ՛ն:

Պահակ - (Բեմ վազելով) Տէր իմ, հետախույզները լուր բերին՝ թէ Հայաստանի մարդկանը կը հասնին:

Կարէն - Լա՛ւ քննեցէք, խաբէութիւն չըլլայ:

Պահակ - Ո՛չ, տէր իմ, նոյնինքն Վասակ Սիւնեցի է (Դարձեալ փողի ձայն):

Վաւա - Այո՛, ճիշտ է, մարդկանական փողի ձայնն է. ես լաւ կը ճանչնամ:

Կարէն - Փառք Որմիւղին (Ձիու դուրս փխնի ձայն):

